

ՀԱՅԵՐԵՆԸ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՍՏԱՆԱ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Posted on February 27, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Վահրամ Աղաջանյան, Ստեփանակերտ, 18 փետրվար 2021

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի) նախագահ Արայիկ Հարությունյանը ստորագրել է ռուսաց լեզուն պաշտոնական ճանաչելու մասին օրենքը: Այս մասին ս.թ. փետրվարի 17-ին տեղեկանում ենք ԼՂ Ազգային ժողովի կայքից: Նշվում է, որ ըստ փոփոխությունների նախագծի՝ "Լեզվի մասին" օրենքում ԼՂՀ պաշտոնական լեզու են ճանաչվում գրական հայերենը և ռուսերենը:

"Արցախում ռուս խաղաղապահների երկարաժամկետ ներկայությունը, բազմաթիվ սոցիալական և հաղորդակցային խնդիրների համատեղ լուծման անհրաժեշտության գիտակցումը, համագործակցությունը շինարարության, առողջապահության, կրթության և գիտության ոլորտներում պահանջում է վերազնահատել ռուսաց լեզվի դերը", - ասվում է փաստաթղթում:

Այսինքն՝ Արցախում 2 հազար ռուս խաղաղապահների ներկայությունը պատճառ դարձավ, որ ռուսերենը պաշտոնական կարգավիճակ ստանա: Այդ տրամաբանությամբ հայերենը նույնպես պետք է պաշտոնական դառնա Ռուսաստանում: Եթե հայկական իշխանությունները հարգում են 2 հազար ռուսալեզու Ռուս քաղաքացիների իրավունքները, ապա Ռուսաստանի իշխանությունները պետք է հարգանքով վերաբերվեն ՌԴ տարածքում ապրող 3 միլիոն հայերի իրավունքներին (հենց այդ թիվն են բարձրաձայնում ռուս մասնագետներն ու փորձագետները ՉԼՄ-ներում):

Հետաքրքիր է նաև մեկ այլ հանգամանք: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը խրախուսում է հայ-ռուսական մամուլի հրատարակումը, ինչպես նաև հայ-ռուսական դասագրքերի, տեղեկատուների, գիտամեթոդական և գիտահանրամատչելի գրականության ստեղծումը», - ասվում է օրինագծում:

Ռուսաստանի Դաշնության իշխանությունները, հատկապես ՌԴ ԱԴԾ-ն/ՓՇԵ-ն, ակնհայտորեն համաձայն չեն այդ կետի հետ: Քանի որ նրանք անօրինական հետապնդումների են ենթարկում հայկական լրատվամիջոցներին: Բավական է հիշել ԱԴԾ-ի կողմից ապօրինաբար փակված «Հյուսիսափայլ» և «Երրորդ Ուժ Պյուն» թերթերի հետ կապված պատմությունը:

Կարծում ենք՝ Հայաստանի և ԼՂՀ իշխանությունները, հատկապես ԼՂ նախագահ Արայիկ Հարությունյանը, պետք է այդ հարցը բարձրացնեն Ռուսաստանի իշխանությունների առջև: Առավել ևս, որ Արայիկ Հարությունյանը, որը նախկինում փրփուրը բերանին ապացուցում էր ամերիկացիներին, որ նա սիրում է ամերիկյան արժեքները, այժմ ապրում է «Իսկ հիմա ես Նատաշա եմ» սկզբունքով...

Վահրամ Աղաջանյան

ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանի եւ ՌԴ ԱԴԾ-ի ջանքերով ապօրինաբար փակված "Երրորդ Ուժ Պյուն" թերթի գլխավոր խմբագիր

There are no comments yet.